



Օ՛, իմ ժողովուրդ, դու հավաքական Նարեկացի, գուցե արդար՛ էր, որ դու՛, հենց դու եւ միայն դու պատասխան տայիր աշխարհի մեծ ու փոքր մեղքերի համար եւ հենց քո ձայնը չլսեր աշխարհը, թեպետ դու աղաղակել ես հենց նրա բառերով: Օ՛, իմ ժողովուրդ, դու հանճարեղ ձախողակ: Պատմություն կոչվող դպրոցի դու միամիտ աշակերտ: Որքան ենք մեր ձախողումների պատճառը դրսում որոնել, երբ պատճառը հաճախ միայն մենք ենք եղել, միայն մենք, մեր բաժան-բաժանությունը, անխելք-հերոսությունը, խելոք-եսամոլությունը... Եվ հաճախ ինչպես ենք ատել ինքներս մեզ: Հավաքական ժողովուրդը սիրել ենք, փոխադարձաբար ատել միմյանց: Ամեն հայ պիտի մի ուրիշ հայ ունենա, որին թշնամի պիտի լինի մինչեւ իր կյանքի վերջը: **ՎԱՐԴԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԷՍԵԻՉՆԵՐ»**

Ուրբաթ
29 հունվարի 2021թ.
№ 2 (544)

ՀԻՍՏՈՐԻԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԵՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru



Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



ՎԱՐԵ ԱՂԱԼԱՐՅԱՆ. «Մեր երիտասարդները պարտքի գիտակցումով եւ սյունեցուն վայել պատվասիրությամբ են ներկայանում գորակոչային հանձնաժողով՝ պատրաստակամ՝ քաջության եւ հնարավոր փորձությունների»

Արդեն առիթ ենք ունեցել ասել, որ Արցախյան կորուստ պատերազմը, բոլոր հակառակորդներով, ողբերգական իրավիճակներով եւ տարակուսներով հանդերձ, յուրօրինակ հերոսամարտ էր հայոց զինվորների,

բազմաթիվ հրամանատարների ու աշխարհագրայինների համար: Պատերազմական դժվարին օրերը երիցս ցույց տվեցին, թե երկրի կյանքում որքան կարեւոր է զինվորատարների դերը:

Ու թեեւ հայտարարված է հրադադար, բայց զինվորատարիատներում պատերազմական շրջանին բնորոշ եռուն օրերը, կարծեք, շարունակվում են նաեւ հետպատերազմական **Շարունակությունը՝ էջ 4**



Խորհրդակցություն՝ Սյունիքի մարզում առկա խնդիրների հետ կապված

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի մոտ հունվարի 13-ին կայացած խորհրդակցության ժամանակ քննարկվել են Սյունիքի մարզի սահմանային միջավայրի փոփոխությամբ պայմանավորված իրավիճակը եւ անվտանգության ապահովման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումները: Բացելով խորհրդակցությունը՝ վարչապետ Փաշինյանը նշել է. «Հարգելի գործընկերներ, այսօրվա մեր խորհրդակցությունը նվիրված է Սյունիքի

մարզի խնդիրներին, եւ մենք այսօր պետք է քննարկենք հարցերի բավական լայն շրջանակ: Հայտնի իրադարձությունների բերումով Սյունիքի սահմանային միջավայրն էական փոփոխություններ է կրել, եւ այսօր պետք է քննարկենք այն միջոցառումները, որ իրականացվում են Սյունիքի հատվածում Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ապահովելու համար, պետք է քննարկենք մինչ այժմ իրականացված աշխատանքները: **Շարունակությունը՝ էջ 2**

Հայրենիքում իմ արնաներկ Գիշերն իջավ անլույս ու լուռ, Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ
Եվ վարդի բույր եւ սրտի հուր: Ամեն մի միտք՝ հիմա մի վերք, Ամեն հայացք՝ հատու մի սուր. Արնոտ դիերն են համր ու մերկ Նայում երկինք անզոր ու զուր: Մի օր ինչ վաճ ծաղկեց մոզված Մեր նահրյան սիրտը բեկված, Հրով որքան խորհրդավոր. Ահա, որպես ծաղիկ թեքված, Մեր հին հոգին համր ու մուր, Ա՛խ, եւ անզոր՝ եւ անարգված...
ՎԱՐՆԱ ՏԵՐՅԱՆ
«Երկիր Նահրի» շարքից

Հանրությունն այդպես էլ չիմացավ, թե ովքեր են հանքերի իրական սեփականատերերը

ՏՄՊԳՅ-ն հրապարակել Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտին նվիրված առաջին ծավալուն ուսումնասիրության արդյունքները, որոնք բավական ուշագրավ հետետությունների տեղիք են տալիս:

ՏՄՊԳՅ-ի գեկուցումը նշվում էր, որ հանքերի սեփականատերերը շարունակում են իրենց ակտիվները գրանցած պահել օֆշորներում, բացի այդ՝ կան օրենսդրական բացեր, որոնք հնարավոր չեն դարձնում հանքերի իրական սեփականատերերի ճշգրտումը: Ինչպես հիշում ենք՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր ատուկիսների ընթացքում պարբերաբար սպառնում էր՝ մինչեւ վերջին օֆշորի տիրոջը գտնել եւ հետ բերել:



Նա նաեւ հրահանգ էր տվել իրավապահ մարմիններին, համապատասխան գերատեսչություններին՝ հետաքննություն սկսել եւ վեր հանել վերջիններիս, թերեւ՝ հետ բերելու նպատակով: Սպառնալով՝ սպառնալ, սակայն ՏՄՊԳՅ գեկուցը գալիս է փաստելու, որ Փաշինյանի այդ հրահանգը կամ անտեսվել է եւ չի կատարվել կամ վարչապետի նման հայտարարությունները պրպուլիզմի հերթական դրսեւորումներն էին, իսկ ինքը՝ Փաշինյանը, օֆշորի տերերի հետ հաշտացրել է լեզու գտնել եւ սովորաբար համագործակցություն հաստատել: Իզուր չէ, որ «Իմ քայլը» խմբակցությունն արեց հնարավոր ու անհնարինը, որպեսզի հասարակությունը չիմանա՝ ովքեր են հանքերի իրական սեփականատերերը: **23.01.2021 թ.**

